ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Վարդուհի Գևորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով ատենախոսությունը նվիրված է ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլի գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրներին: Շուկայական հարաբերությունների զարգացման գործընթացներում էական դերակատարում են ձեռք բերում գործարար փոխհարաբերությունների, պետական մասնավոր գործընկերության բազմազան ձևերի կարգավորումները: Տնտեսական բարեփոխումները սերկա իրողությունն անխուսափելիորեն հանգեցրել է տնտեսական քաղաքականության այնպիսի զարգացումների, որոնցում գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները առանցքային դեր ու նշանակություն են ստացել: Ավելին, գույքային հարաբերությունները ներ են թափանցում հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այս բոլորը պատճառ են հանդիսանում գույքային հարաբերությունները համալիր ուսումնասիրության ենթարկելու համար: Վերջինիս արդյունքում էլ հնարավորություններ են ստեղծվում գույքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և կարգավորման խնդիրների լուծման համար: Վերոգրյալն ամբողջությամբ վերաբերվում է նաև մեր հանրապետության գույքային ռեսուրսներին: Առաջադրված հիմնահարցերի օպտիմալ լուծման համար պահանջվում է գիտականորեն հիմնավորված գործիքակազմերի մշակում: Դրանով է պայմանավորված քննարկվող ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Գույքային հարաբերությունների ուսումնասիրության նպատակը դրանց զարգացման օրինաչափությունների և կարգավորման ուղղությունների բացահայտումն է ՀՀ-ում: Նշված նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել «գույք» հասկացությունը, գույքային հարաբերությունները,
- բացահայտել գույքային հարաբերությունների տեղն ու դերը հասարակական հարաբերությունների համակարգում,
- հետազոտել հասարակական տնտեսական ֆորմացիաների առանձնահատկությունները գույքային հարաբերությունների տեսանկյունից,
- դասակարգել գույքի բազմակողմ տեսակները,
- ցույց տալ ոչ նյութական գույքային հարաբերությունների իրացման և վերարտադրության արդի առանձնահատկությունները,
- պետության տնտեսական գործառույթների համակարգում հարկերը դիտարկել որպես գույքային հարաբերությունների զարգացման գործիքակազմ
- բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման պետական կարգավորման ուղղությունները,
- բնութագրել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում,
- բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացնել նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Գիտական արդյունքների հավաստիությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 165 համակարգչային էջի վրա, պարունակում է 12 գծապատկեր և 21

աղյուսակ:

Ատենախոսության առաջին՝ «Գույքային հարաբերությունների էությունը շուկայական տնտեսության համակարգում» գլխում ուսումնասիրվել են գույքի և գույքային հարաբերությունների տնտեսագիտական բովանդակությունը, ինչպես նաև ներկայացվել գույքի տեսակների բազմակողմ դասակարգումը:

Ատենախոսության երկրորդ՝ «Գույքային հարաբերությունների առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում» գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների իրացման չափումը և կարգավորումը, ինչպես նաև գույքային հարաբերությունների զարգացման միտումները ժամանակակից պայմաններում:

Ատենախոսության երրորդ՝ «Գույքային հարաբերությունների պետական կարգավորումը ՀՀ-ում» գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում, բացահայտվել են գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները, գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացվել է նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Ստացված գիտական ընդհանրացումները, դրույթները, առաջարկությունները հիմնված են տնտեսական և քաղաքական գործընթացները հետազոտող գիտնականների աշխատությունների վրա: Վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գիտական աղբյուրներից, նորմատիվաիրավական ակտերից, վիճակագրական պաշտոնական տեղեկագրերից, համացանցից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները հիմնավորված են և բխում են կատարված տեսական ուսումնասիրություններից ու կոնկրետ մեթոդական, գործնական նյութերից:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. Մշակվել են գույքի և գույքային հարաբերությունների նորովի սահմանումներ սոցիալ-տնտեսական տեսանկյունից, որն էլ հնարավորություն կտա բացահայտելու գույքային հարաբերությունների ժամանակակից բովանդակությունը:
2. Քանի որ մինչև հիմա գույքային հարաբերությունների էության քննարկման մակարդակը նյութական բաղադրիչից տեղափոխվել է դեպի իրավական վերլուծություն, ապա արդի պայմաններում նպատակահարմար է ընտրել դինամիկ մոտեցման կիրառությունը, որը հիմնվում է զարգացման պատմական և սոցիալ-տնտեսական ասպեկտների փոխկապվածության սինթեզի սկզբունքի վրա: Սինթեզը իր մեջ ներառում է մարքսյան տեսության, ինստիտուցիոնալիզմի և նեոինստիտուցիոնալիզմի դրույթների համադրումը: Այսինքն՝ գույքային հարաբերությունների տնտեսական բովանդակության հիմք են հանդիսանում արտադրահարաբերությունները (մարքսիզմ), ինստիտուտների ամբողջությունը և մարդու գործունեությունը հանդես են գալիս որպես գույքային հարաբերությունների զարգացման շարժիչ ուժեր (ինստիտուցիոնալիզմ) և իրավասությունները ռեսուրս են, ինչպես և ցանկացած նյութական օբյեկտ (նեոինստիտուցիոնալիզմ), ինչն էլ հնարավորություն է տալիս բացահայտելու գույքային հարաբերությունների բովանդակության զարգացումը արդի պայմաններում:
3. Հիմնավորվել է գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի հավասարակշռությունն ապահովող գործիքակազմը դրանց զարգացման ընթացքում: Այն հարկային համակարգի միջոցով պետական կարգավորման գործընթացների մի ամբողջություն է: Գույքային հարաբերությունների իրացման գործընթացի գնահատման համար ընտրվել են սոցիալ-տնտեսական ցուցանիշներ: Վերջիններս հնարավորություն կտան բնութագրելու գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի բավարարման աստիճանը

գույքային հարաբերությունների զարգացման գործընթացում իրենից ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտների իրացման արդյունքների յուրացման գործընթացին մասնակցության հնարավորությունը գույքային անկախ այն բանից, թե իրավաբանորեն ում է պատկանում տվյալ գույքը: Այլ կերպ ասած, գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը ցույց է տալիս մակրոմակարդակում բնակչության կյանքի որակի և մակարդակի աճը:

5. Բացահայտվել են գույքային հարաբերությունների մի շարք օբյեկտների (մտավոր և վիրտուալ) սեփականության իրացման առանձնահատկությունները: Մտավոր սեփականության յուրացման առանձնահատկությունները պայմանավորված են գիտելիքի հատկություններով: Մտավոր սեփականության իրացման ընթացքում անշեղորեն աճում է մասնակցող սուբյեկտների թիվը: Ածանցյալ ֆինանսական գործիքները գույքային հարաբերությունների իրացման որակական վիճակ են, որոնք աստիճանաբար դուրս են գալիս իրական տնտեսական հարաբերությունների սահմաններից:

6. Աշխատանքում գույքային հարաբերությունների զարգացման որակական վիճակները առանձնացված են, որոնք ապահովում են գույքային հարաբերությունների զարգացման հաջորդ մակարդակին անցումը, մասնավորապես.

- գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց իրացման գործընթացում գործունեության անձնավորմամբ,
- գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց իրացման գործընթացում գործունեության ապաանձնավորմամբ,
- գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց ձևավորմամբ, որտեղ գույքային հարաբերությունների իրացումը կայանում է իրավասությունների փնջերի տեսքով: Այսպես, եթե բաժնետիրական ձևի դեպքում իրավասությունները համախմբված են անորոշ ժամանակով, ապա ժամանակակից պայմաններում գույքային

տարբեր մակարդակներում (ՀՆԱ-ի դինամիկա, աշխատավարձի մասնաբաժինը ՀՆԱ-ում և այլն):

4. Որպես նորույթ է սահմանվել գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը: Վերջինս իրենից ներկայացնում է տնտեսվարող սուբյեկտների մասնակցության հնարավորությունը գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման գործընթացին, անկախ այն բանից, թե իրավաբանորեն ում է պատկանում տվյալ գույքը: Այլ կերպ ասած, գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը ցույց է տալիս մակրոմակարդակում բնակչության կյանքի որակի և մակարդակի աճը:
5. Բացահայտվել են գույքային հարաբերությունների մի շարք օբյեկտների (մտավոր և վիրտուալ) սեփականության իրացման առանձնահատկությունները: Մտավոր սեփականության յուրացման առանձնահատկությունները պայմանավորված են գիտելիքի հատկություններով: Մտավոր սեփականության իրացման ընթացքում անշեղորեն աճում է մասնակցող սուբյեկտների թիվը: Ածանցյալ ֆինանսական գործիքները գույքային հարաբերությունների իրացման որակական վիճակ են, որոնք աստիճանաբար դուրս են գալիս իրական տնտեսական հարաբերությունների սահմաններից:
6. Աշխատանքում գույքային հարաբերությունների զարգացման որակական վիճակները առանձնացված են, որոնք ապահովում են գույքային հարաբերությունների զարգացման հաջորդ մակարդակին անցումը, մասնավորապես.
   - գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց իրացման գործընթացում գործունեության անձնավորմամբ,
   - գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց իրացման գործընթացում գործունեության ապաանձնավորմամբ,
   - գույքային հարաբերությունների որակական վիճակը՝ արտահայտված դրանց ձևավորմամբ, որտեղ գույքային հարաբերությունների իրացումը կայանում է իրավասությունների փնջերի տեսքով: Այսպես, եթե բաժնետիրական ձևի դեպքում իրավասությունները համախմբված են անորոշ ժամանակով, ապա ժամանակակից պայմաններում գույքային

հարաբերությունների իրացման այնպիսի ձևերի դեպքում, ինչպիսիք են այլանսային, կոնցեսիոն համաձայնագրերը, դրանց գոյության ժամկետը նպատակաուղղված է որոշակի խնդիրների լուծմանը և մասնակից սուբյեկտների կողմից համապատասխան արդյունքի ստացմանը:

7. Բացահայտվել են գույքային հարաբերությունների իրացման գործընթացի վրա ազդող պայմանները, որոնք կապահովեն դրա շարունակականությունը, և դրանով պայմանավորված առանձնացվել են գույքային հարաբերությունների պետական կարգավորման ուղղությունները:
8. Բացահայտվել են գույքային հարաբերությունների զարգացման գործոնները՝ մարդկային կապիտալի, կրթական համակարգի, տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը:

Ատենախոսությունում ձևակերպված տեսական դրույթներն ու եզրակացություններն ուղղված են ՀՀ-ում գույքային հարաբերությունների պետական կարգավորման գործընթացի բարելավմանը: Հեղինակի առաջարկությունները կարող են օգտագործվել գույքային հարաբերությունների զարգացման և կարգավորման հիմնախնդիրներին վերաբերող հետագա հետազոտությունների համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ ունի հետևյալ թերությունները.

1. Հայտնի է, որ գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում և՛ ազգային, և՛ համաշխարհային տնտեսությունների մասշտաբով աշխատանքի հասարակական բաժանումը գնալով ավելի ու ավելի է խորանում, հետևաբար և հասարակական արտադրական հնարավորությունները ընդլայնվում են, արդյունքում մարդկանց կենսամակարդակն է բարձրանում: Սակայն ատենախոսը նշում է, որ աշխատանքի բաժանման արդյունքում ձեռնարկությունների մի զգալի մասը լուծարվում է: Դա ճիշտ մոտեցում չէ: Աշխատանքի հասարակական բաժանման խորացման պայմաններում մասնագիտացումը և կոոպերացումը ավելի են

տարածվում՝ տարբեր ձեռնարկությունների տեսքով, հետևաբար գույքային հարաբերությունների ցանցն ընդլայնվում է:

2. Ըստ ատենախոսի, միայն սեփականության հարաբերությունների վերլուծությունը թույլ չի տալիս ընդգրկելու տնտեսական հարաբերությունների ողջ համալիրը և չի բևեռում մարդկանց ուշադրությունը դրանց բովանդակության վրա, հետևաբար ուսումնասիրությունը կատարվում է տնտեսական հարաբերությունների միայն արտաքին ձևերի վերլուծության շրջանակներում: Սակայն պետք է նշել, որ տնտեսագիտության տեսության իմաստով սեփականությունը արտահայտում է մարդկանց միջև ձևավորված հարաբերությունները ռեսուրսների տիրապետման կտրվածքով: Այսինքն՝ սեփականությունը ռեսուրսի տիրապետման, օգտագործման և տնօրինման միասնությունն է, որն էլ բնութագրում է սեփականության տնտեսական բովանդակությունը: Այսպիսով, սեփականության տնտեսական և իրավական կողմերը միմյանց հետ սերտ կապի մեջ են գտնվում: Դրանց անջատումն իրարից անիմաստ է դառնում:

3. Հեղինակն ատենախոսության 2.1 ենթագլխում բավականին մանրամասնորեն քննարկել է բազմաթիվ երկրների հարկային եկամուտների և աշխատավարձի տնտեսակարար կշիռը ՀՆԱ-ում մարդկային զարգացման համաթվի հետ միասին որպես գույքային հարաբերությունների իրացման արդյունք: Հանրահայտ է, որ հարկային համակարգի դերը գույքային հարաբերությունների իրացման գործընթացում կայանում է հիմնականում եկամտի բաշխման և վերաբաշխման ոլորտում անհավասարության հարթեցման մեջ: Իսկ ինչ վերաբերվում է մեր հանրապետությանը, ապա կարելի էր ավելի մանրամասն անդրադառնալ ՀՀ առանձին հարկատեսակների տեսակարար կշռին ՀՆԱ-ում:

4. Ատենախոսությունում տեղ են գտել լեզվառճական բնույթի որոշ թերություններ (օրինակ, էջեր 9, 26, 29, 101, 119):

Եզրակացություն

Մեր կողմից նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և էապես չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա:

Վարդուհի Գնորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար կարելի է գնահատել որպես ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Այն նվիրված է գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրներին ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում: Գրախոսվող ատենախոսությունը հեղինակի հետևողական գիտական հետազոտության արդյունք է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Վարդուհի Գնորգի Գաբրիելյանի «Գույքային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությանը ներկայացվող պահանջներին: Այն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մ. Ն. Թավադյան**

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Մ. Ն. Թավադյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն. Հ. Դարբինյան
31.01.2020թ.